

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՁԵՎԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԸ**

Գևորգ ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ

*ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի
նախագահի խորհրդական,
ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ*

Դատավարական ձևը քրեական դատավարության իրավունքի գիտության հիմնախնդրային հասկացություններից մեկն է: Իրավաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա ինչպես քրեադատավարական ձևի բովանդակության, դրա նշանակության, այնպես էլ զարգացման ուղղությունների և հեռանկարների վերաբերյալ:

Բազմաթիվ գիտական աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել ուշագրավ և բուռն են եղել գիտական վեճերը քրեադատավարական ձևի զարգացման միտումների վերաբերյալ: Դա, թերևս, կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ առաջարկվող մոտեցումներն ապագայի կանխատեսումներ էին, որոնց հիմքում քրեադատավարական ձևի կատարելագործման այս կամ այն տարբերակի դրական և բացասական կողմերի վերլուծությունն էր: Մասնավորապես, միմյանց հակադրվում էին քրեադատավարական ձևի ունիֆիկացման և տարբերական մոտեցումները, իսկ գիտական անհամաձայնությունների էպիկենտրոնը քրեադատավարական ձևի տարբերական թույլատրելիությունն էր:

Գրականության մեջ նշվում է, որ դատավարական ձևի տարբերակում ասելով հասկանում ենք միասնական դատական համակարգի և միասնական քրեադատա-

վարական օրենսդրության շրջանակներում, հիմնվելով միասնական սկզբունքների վրա, միասնական խնդիրները տարբեր եղանակներով լուծելու հնարավորություն:

Դատավարական ձևի տարբերակումը, փաստորեն, մեկից ավելի դատավարական ձևերի առկայությունն է:

Դատավարական ձևի տարբերական թույլատրելության հիմնահարցը գիտական անհամաձայնությունների առարկա է դեռևս 1960-ական թվականներից: Խնդրո առարկայի վերաբերյալ առկա էր երկու՝ միմյանց հակադրվող մոտեցում: Իրավագետների առաջին խումբը Մ. Ստրոգովիչի գլխավորությամբ գտնում էր, որ քրեական դատավարության զարգացումն ընթանում է դատավարական ձևի ունիֆիկացման ճանապարհով, և դատավարական ձևի տարբերակումը համարում էր հրաժարում քրեական դատավարության կարևորագույն երաշխիքներից:

Ըստ այս հեղինակների՝ դատավարական ձևի ունիֆիկացումը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ «պարզ հանցագործություն», «ակնհայտ հանցագործությունների վերաբերյալ գործեր» հասկացություններ որպես այդպիսիք գոյություն չունեն: Յուրաքանչյուր գործ ենթակա է լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի քննության: Նույնիսկ եթե գործն իրականում պարզ է, այնուամենայնիվ այն արժանի է բազմակողմանի քննության, քանի որ դրանից կախված է մարդկանց ճակատագիրը:

«Քրեական գործերի այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են պարզ, հասարակ, անվիճելի գործերը, գոյություն չունեն: Յուրաքանչյուր քրեական գործ ենթակա է

ճիշտ քննության իր բոլոր հանգամանքներով»³, - գրում էր Մ. Ս. Ստրոգովիչը:

Բացի այդ՝ դատավարական ձևի միասնականությունը, համաձայն այս մոտեցման, պայմանավորված է «հանցագործություն» հասկացության միասնականությամբ, որն ներառում է քրեորեն պատժելի բոլոր արարքները՝ միասնական դատական հանակարգի առկայությամբ և քրեական դատավարության սկզբունքների միասնական հանակարգով:

Գրականության մեջ նշվում էր, որ քրեական դատավարության սկզբունքների միասնականությունը նշանակում է, որ բոլոր սկզբունքները հավասարապես պարտադիր են բոլոր դատարաններում և բոլոր գործերով իրականացվող դատավարությունների համար: Իսկ դա որոշիչ նշանակություն ունի քրեադատավարական ձևի միասնականության համար⁴:

Վերջապես, ներկայացվող մոտեցման համաձայն՝ «դատավարական խնայողությունը», որի վրա հիմնվում են դատավարական ձևի տարբերակման կողմնակիցները, որպես սկզբունք գոյություն չունի, այն մտացածին հասկացություն է: Այս հեղինակները նշում էին, որ քննության արագությունը և գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտումն անհամեմատելի են: Գործով քրեական վարույթն իրականացվում է ոչ թե քննության արագության, այլ օբյեկտիվ ճշմարտության բացահայտման նպատակով: Ուստի, քննության արագությունը չի կարելի համարել գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը համարժեք⁵:

Մ. Ս. Ստրոգովիչը գրում էր, որ «դատավարական ձևի պարզեցումը քննչական և դատական պրակտիկայի ամենավտանգավոր երևույթն է, որը դրսևորվում է քրեական դատավարության օրենսգրքի հետ կամայական վերաբերմունքի, դրա խախտման, օրենքով սահմանված դատավարական ձևերը շրջանցելու տարբեր փորձերի մեջ այն պատրվակով, որ կարևորը ոչ թե ձևականություններն են, այլ գործի ըստ էութ-

յան ճիշտ լուծումը»⁶:

Ի. Ի. Մարտինովիչը, ընդունելով վերոնշյալ մոտեցումը, այն լրացնում է լրացուցիչ փաստարկներով՝ նշելով, որ դատավարական ձևի տարբերակման հարցի քննարկման ժամանակ երբեք հաշվի չի առնվում դատարանի դաստիարակչական գործառույթը: Ընդ որում՝ արդարադատության նախականիսիչ դերի բարձրացման անհրաժեշտությունը թելադրվում է հասարակական զարգացման պայմաններով, ինչպես նաև պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և հատկապես իրավապահպան գործունեության բնագավառում բարոյական սկզբունքների դերի մեծացմամբ⁷:

Չեղինակը նշում է նաև, որ քրեադատավարական ձևի պարզեցումը չի կարող իրականացվել արագության, խնայողության և ռացիոնալության ապահովման պատճառաբանությամբ: Իհարկե, դատավարության դաստիարակչական-նախականիսիչ ուղղվածությունն ապահովելու համար կարևոր է հանցագործության և պատժի պահերի մոտեցումը, բայց ոչ անձի իրավունքների սահմանափակման և դատական քննության որակի հաշվին: Դանդաղ կոտության և անգործության դեմ անհրաժեշտ է պայքարել առաջին հերթին գործող օրենսդրության պահանջների խստիվ պահպանման, նախնական քննության մարմինների և դատարանի աշխատանքի ճիշտ կազմակերպման, դատավարական ժամկետների ինստիտուտի և այլ նորմերի կատարելագործման միջոցով:

Չեղինակն ավելացնում է, որ քրեադատավարական ձևի տարբերակման հարցը լուծելու ժամանակ չի կարելի մոռանալ, որ հասարակությունը նպատակամղված է գնացել մանրամասն մշակված, գիտականորեն հիմնավորված, դատական քննության համապատասխան երաշխիքներով հագեցված ընթացակարգի սահմանմանը, որն ստեղծում է օպտիմալ պայմաններ ճշմարտության բացահայտման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության,

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

օրինականության և արդարության վերականգնման նպատակով պետական միջամտություն պահանջող բարդ կոնֆլիկտների ճիշտ լուծելու, ինչպես նաև հասարակության վրա բարոյական ազդեցություն ցուցաբերելու համար: Գոյություն ունեցող դատավարական ձևը պետք է պահպանվի, քանի որ դրանում ամբողջական և հետևողականորեն արտացոլված են խորհրդային արդարադատության ժողովրդավարական սկզբունքները: Գիտնական-իրավաբանների և պրակտիկ աշխատողների ջանքերը պետք է ուղղված լինեն դատավարական ձևի հետագա կատարելագործմանը, զարգացմանը և հարստացմանը⁸:

Միաժամանակ, այս հեղինակները գտնում էին, որ քրեադատավարական ձևը պետք է լինի ռացիոնալ, ինչը, սակայն, որևէ կապ չունի «դատավարական խնայողության» հետ, որը հանգեցնում է միայն գործերը քննելու և լուծելու ժամանակ օրինականության խախտման⁹:

Դատավարական ձևի տարբերակման կողմնակիցները որպես դրա անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկ ներկայացնում էին հիմնականում դատավարական միջոցների և վարույթի ընթացքում ծախսվող ժամանակի խնայումը:

Նրանք գտնում էին, որ պետությունն ի վիճակի չէ անսահմանափակ ուժեր և միջոցներ տրամադրելու հանցավորության դեմ պայքարին: Իսկ այդ պայքարի օպերատիվությունն ու արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է դատավարական ձևից հանել բոլոր ավելորդությունները¹⁰:

Այս հեղինակները դատավարական ձևի տարբերակման եղանակ համարում էին ոչ թե դատավարական երաշխիքներից հրաժարումը, այլ քրեադատավարական նորմերի զարգացումը և ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով դատավարական երաշխիքների ուժեղացումը:

Վ. Արսենը գրում էր, որ «դատավարական ձևի տարբերակումը նույնքան հիմնավորված է, որքան դրա ունիֆիկացումը: Այս երկու՝ արտաքնապես միմյանց հակասող տենդենցները գոյություն ունեն դիալեկտիկական միասնության մեջ:

Եթե ունիֆիկացված կարգը վերաբերում է քրեական գործերի մեծ մասին, ապա տարբերակումը վերաբերում է անհամեմատ ավելի քիչ թվով գործերի և ընթանում է երկու ուղղությամբ. մի կողմից՝ որոշ գործերի քննության համար լրացուցիչ երաշխիքների նախատեսում, մյուս կողմից էլ՝ առանձին գործերով վարույթների պարզեցում»¹¹:

Դատավարական ձևը տարբերակելու մոտեցումը պաշտպանում էին նաև այլ հեղինակներ: Մասնավորապես, Ա. Գուլյակը նշում էր, որ «դատավարական ձևի տարբերակումը ինչպես լրացուցիչ իրավական երաշխիքների ամրագրման, այնպես էլ դատավարական ձևի պարզեցման տեսանկյունից օբյեկտիվ և արդարացված երևույթ է», և կարծիք էր հայտնում, որ առանձին կատեգորիայի գործերով պարզեցված դատական քննության նախատեսումը հնարավոր է միայն դատական քննության ընդհանուր կարգի պահպանման և մեղադրյալի համար լրացուցիչ իրավունքների և դրանց իրականացման լրացուցիչ երաշխիքների ամրագրման պայմաններում»¹²:

Ս. Ս. Ցիգանենկոն գրում է. «... ժամանակակից քրեական դատավարությունը, ինչպես ցույց է տալիս համեմատական վերլուծությունը, հնարավոր չէ առանց դրա տարբերակման՝ կապված իրավական ներգործության հատուկ մեթոդի՝ տարբերակման կիրառման հետ, որը նախևառաջ պայմանավորում է դատավարությունում իրավական երևույթների, դրանց առանձին կառուցվածքային հատկությունների զարգացումը»¹³:

Քրեադատավարական ձևի տարբերակման մոտեցումը ընդունում էին նաև պրակտիկ իրավաբանները¹⁴:

Նկատելով, որ հիմնախնդրի առաջացման սկզբնական շրջանում առավել հիմնավոր և այդ ժամանակի պահանջներին ու

հասարակական կյանքի զարգացման մակարդակին առավել համահունչ էին համարվում քրեադատավարական ձևի ունիֆիկացման անհրաժեշտությունը հիմնավորող մոտեցումները, վստահաբար կարող ենք նշել, որ այդպիսի վիճակն օբյեկտիվ պատճառներ ուներ: Դատավարական ձևի տարբերակման անհրաժեշտությունը հերքող մոտեցումների արդարացումը հենց ժամանակն էր: Բանն այն է, որ ստալինյան ժամանակաշրջանի «դատավարական պարզեցման» հետևանքը եղավ այն, որ նախնական քննությունը վերածվեց դատախազական-նստիկական հետաքննության՝ առանց որևէ դատական վերահսկողության, իսկ դատական քննությունը դարձավ լավ կազմակերպված բեմադրություն, որի բովանդակությունը կազմում էր քննիչների «ստեղծած» ապացույցների անվերապահ հաստատումը: Դատարանի խնդիրները գրեթե նույնանուն էին հետաքննության մարմինների և դատախազության խնդիրների հետ:

Ինչպես նշվում է գրականության մեջ, «այս իրավիճակում, 1960-ական թվականները սկսած, ուսումնասիրողների առաջ քաշած՝ բոլոր քրեական գործերով և վարույթի բոլոր փուլերի համար դատավարական ձևի միասնականացման գաղափարը ճիշտ ժամանակին էր և ընդհանուր առմամբ դրական նշանակություն ունեցավ»¹⁵:

Այդ հանգամանքն ընդունում և զնահատում էին նաև դատավարական ձևի տարբերակման կողմնակիցները: Այսպես, Մ. Յակուբը գրում էր, որ «վարույթի ունիֆիկացման գաղափարը դրական նշանակություն ունեցավ, քանի որ ուղղված էր երաշխիքների ցանկացած սահմանափակման, իրավական նիհիլիզմի տարբեր դրսևորումների դեմ...»¹⁶:

Կարելի է վստահաբար նշել նաև, որ դատավարական ձևի տարբերակման կողմնակիցներն իրենց գիտական աշխատություններում միշտ շեշտել են միասնական դատավարական ձևի կարևորությունը և չեն փորձել բացարձակացնել տարբերակման նշանակությունը՝ ի տարբերություն հակառակ թևի ներկայացուցիչների,

ովքեր քրեադատավարական ձևի տարբերակումը համարում էին քրեական դատավարությունը կազմալուծող մի երևույթ: Առաջինների գիտական հիմնավորումներն առավելապես վերաբերում էին տարբերակման միջոցով քրեադատավարական ձևի կատարելագործման հնարավորությանը և հասարակական զարգացման տվյալ փուլում քրեական դատավարությունում տարբերակված դատավարական ձևերի ներմուծման անհրաժեշտությանը՝ չհերքելով դրա չափավոր սահմանափակվածությունը և չժխտելով դատավարական ձևի միասնականության կարևորությունը քրեական դատավարության զարգացման գործում:

Այսպես, Խ. Ու. Ռուստամովի կարծիքով, դատավարական ձևի ունիֆիկացումը չի կարող նպաստել դրա կատարելագործմանը: Յեղիճնակը միաժամանակ իրավաչափ չի համարում նաև այն պնդումը, թե տարբերակումը պետք է դարձնել քրեադատավարական ձևի զարգացման գերակա տենդենց: Տարբերակումն ինքնամպատակ չէ, այն օբյեկտիվ գործընթաց է՝ պայմանավորված քրեական դատավարության գործնական պահանջներով¹⁷:

Ա. Ա. Սիչևն էլ գրում է, որ տարբերակման սկզբունքը, չնայած քրեական դատավարությունը ժամանակակից պայմաններին հարմարեցնելու համար դրա նշանակությանը, չպետք է կիրառվի կամայական հայեցողությամբ: Տարբերակման սկզբունքի վայրկենական օգտավետությունը չպետք է առիթ հանդիսանա միասնական քրեադատավարական ձևի գիտական որոնումները դադարեցնելու համար¹⁸:

Այսպիսի դիրքորոշմամբ հեղինակը կարծեք թե դատավարական ձևի տարբերակումը համարում է ժամանակավոր երևույթ՝ մինչև կատարյալ միասնական քրեադատավարական ձևի կայացումը:

Քանի որ քրեադատավարական ձևի տարբերակման հիմնական նպատակը դատավարական խնայողությունն է, որը հանդիսանում է նաև քրեադատավարական

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ձևի տարբերակման անհրաժեշտության հիմնական փաստարկ, և որի՝ սկզբունք հանդիսանալը հերքում էին դատավարական ձևի տարբերակման հակառակորդները, հետևաբար հիմնախնդրի վերաբերյալ մեր մոտեցումն արտահայտելու համար հարկ ենք համարում անդրադառնալ «խնայողություն» կատեգորիային:

Ամենապարզ բնութագրմամբ՝ խնայողությունը ինչ-որ բանի տնտեսումն է, սուբյեկտի ձգտումը՝ չվատնել, չծախսել կամ հնարավորինս քիչ ծախսել որևէ ռեսուրս:

Կ. Բ. Կալինովսկին քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք է համարում արագությունը: Հեղինակը միաժամանակ շեշտում է, որ քրեական դատավարության արագությունը՝ որպես սկզբունք, չի կարող նույն մակարդակի վրա դրվել քրեական դատավարության այնպիսի սկզբունքների հետ, ինչպիսիք են օրինականությունը, մրցակցությունը, հրապարակայնությունը, կողմերի հավասարությունը, դատարանի անկախությունը¹⁹:

Սեր կարծիքով, արագությունը կարելի է դիտարկել երկու՝ միմյանց հետ սերտորեն կապված ասպեկտներից՝ որպես դատավարական գործողությունների կատարման անհետաձգելիություն և որպես ժամանակի խնայողություն: Առաջին իմաստով, որով այն քննարկում է Կ. Կալինովսկին, արագությունը արդար դատական քննության, իսկ ավելի կոնկրետ՝ դրա պահանջներից մեկը հանդիսացող ողջամիտ ժամկետի պահպանման միջոց է: Այսինքն՝ այդ իմաստով արագությունը լիովին տեղավորվում է արդար դատական քննության սկզբունքի շրջանակներում:

Երկրորդ իմաստով էլ այն խնայողության դրսևորումներից մեկն է, քանի որ ժամանակի՝ որպես ռեսուրսի տնտեսման ձև է:

Հետևաբար՝ մենք չենք կիսում արագության՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն սկզբունքի գոյության վերաբերյալ կարծիքը:

Վերադառնալով խնայողությանը՝ նշենք, որ այն որպես սկզբունք քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված չէ: Չնայած դրան՝ ՀՀ դատական օրենսգրքի «Դատական իշխանության գործունեության սկզբունքները» վերնագրով 2-րդ գլխում նախատեսված է «Արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքները» վերտառությամբ 16-րդ հոդված, որը սահմանում է, որ դատարանում գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով կողմերի մասնակցությամբ որպես կանոն իրականացվում է գործի դատական քննության նախապատրաստական փուլ:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննությունը որպես կանոն իրականացվում է դատավարական օրենքով սահմանված պարզեցված ընթացակարգերով:

Դատական քննությունը որպես կանոն պետք է ավարտվի մեկ դատական նիստով:

Գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում:

Խորամուխ չլինելով մեջբերված հոդվածի բովանդակության մեջ՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ դատական օրենսգրքը արդյունավետությունը հռչակում է որպես դատական իշխանության իրականացման սկզբունք:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասն էլ սահմանում է, որ հսկողություն իրականացնող դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար:

Գրականության մեջ նշվում է, որ արդյունավետությունը ենթադրում է անմիջական նպատակների իրականացում, ոչ անմիջական նպատակների իրականացում և ռացիոնալություն, այսինքն՝ ուժերի և միջոցների խնայողություն²⁰:

Կարծում ենք՝ նշվածը բավարար է հակադարձելու համար գրականության մեջ արտահայտված այն դիրքորոշմանը, որ

խնայողությունը ռացիոնալության հետ որևէ կապ չունի:

Այսպիսով, խնայողությունը, որը որպես գոյություն ունեցող պահանջ միանշանակ չէր ընդունվում դատավարական ձևի տարբերակման ընդդիմախոսների կողմից, ի թիվս այլ բաղադրիչների՝ կազմում է արդյունավետությունը, որն այսօր արդեն սկզբունքի մակարդակի բարձրացված իրավական պահանջ է՝ ուղղված քրեական վարույթն իրականացնող մարմիններին:

Ինչ վերաբերում է քրեադատավարական ձևի տարբերակման ընդդիմախոսների այն փաստարկներին, որ քրեադատավարական ձևի միասնականությունը պայմանավորված է քրեական դատավարության սկզբունքների, խնդիրների միասնականությամբ, ապա հարկ ենք համարում շեշտել, որ տարբերակումը վերաբերում է ոչ թե քրեական դատավարությանը, այլ դրա ձևին: Քրեադատավարական ձևի տարբերակումը ոչ թե երկատում է քրեական դատավարությունը, սահմանում երկակի խնդիրներ ու սկզբունքներ, այլ հնարավորություն է տալիս միասնական քրեական դատավարությունն իրականացնել տարբեր ձևերով՝ միասնական սկզբունքների շրջանակներում և միասնական խնդիրների իրականացման համար: Այլ կերպ՝ քրեադատավարական ձևի տարբերակումը, որը միանշանակ հնարավոր է միասնական քրեական դատավարության պայմաններում, ենթադրում է քրեական դատավարության խնդիրների՝ տարբեր եղանակներով իրականացնելու հնարավորություն՝ գործի կոնկրետ հանգամանքներին համապատասխան: Այսինքն՝ տարբերակման դեպքում տեղի են ունենում քրեական դատավարության ձևի մեջ զեղչումներ կամ հակառակը՝ հավելումներ, կախված այն բանից, թե կոնկրետ իրավիճակում քրեական դատավարության միասնական նպատակները արդյունավետ նվաճելու համար դրանցից որն է անհրաժեշտ:

Ներկայում դատավարական ձևի տարբերակման կողմ և դեմ մոտեցումների հա-

րաբերակցությունն էապես փոխվել է: Այժմ արդեն հազվադեպ կարելի է հանդիպել մոտեցումների, որոնք ամբողջովին հերքում են դատավարական ձևի տարբերակման թույլատրելիությունը: Գիտական վեճերն այժմ արդեն կապված են հիմնականում դատավարական ձևի տարբերակման թույլատրելի սահմանների հետ:

Փաստորեն, դատավարական ձևի տարբերակման անհրաժեշտությունը ժամանակի ընթացքում ավելի հիմնավորվեց: Այն զգալիորեն պայմանավորված էր նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո դրա անդամ պետություններում սկսված հասարակական կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ դատաիրավական բնագավառի բարեփոխումներով, որոնք առաջ քաշեցին արդարադատության որակի նոր չափանիշներ՝ դրանով իսկ նոր խնդիրներ ու նպատակներ առաջադրելով քրեական դատավարությունն իրականացնող մարմիններին:

Ինչպես նշվում է գրականության մեջ, պոպուլիստական այն գաղափարը, թե «ոչինչ այնքան թանկ չի արժենում, որքան է-ժան արդարադատությունը», ոչ մի պետությունում անվերապահ չի ընդունվում²¹:

Ժամանակն իրոք ցույց տվեց, որ ավելի արդիականը դատավարական ձևի տարբերակման մոտեցումն է, քանի որ հիմնախնդրի առաջացումից հետո շուրջ երեքուկես տասնամյակ անց, հիմնականում դատաիրավական բարեփոխումներով պայմանավորված, նախկին ԽՍՀՄ անդամ պետությունների մեծ մասում կատարվեցին օրենսդրական փոփոխություններ, որոնք քրեական դատավարության համակարգ մտցրեցին դատավարական ձևի դիֆերենցացված տարբերակներ:

Վերոնշյալը կրկին հաստատում է այն հանգամանքը, որ դատավարական ձևի տարբերակումն օբյեկտիվ գործընթաց է, իսկ դրա ընդունելիությունը պայմանավորված է հասարակության իրավագիտակցության, իրավական մշակույթի և ընդհանրապես հասարակական զարգացման մակարդակով:

Քրեպատմական հոսանքներ եւ**դասավորութեան**

- ¹ Տե՛ս Великий Д.П. Единство и дифференциация уголовно-процессуальной формы: история, современность, перспективы: дисс. ... канд. юрид. наук. М., 2001г.- 211 էջ:
- ² Տե՛ս Строгович М.С. О единой форме уголовного судопроизводства и пределах ее дифференциации. Социалистическая законность. 9/1974г., էջ 50-53:
- ³ Տե՛ս Строгович М.С. Актуальные вопросы судебной этики // Совершенствование законодательства о суде и правосудии. М., 1985г., էջ 5:
- ⁴ Տե՛ս Строгович М.С. О единой форме уголовного судопроизводства и пределах ее дифференциации. Социалистическая законность, էջ 52.
- ⁵ Տե՛ս Каз Ц. О единстве и дифференциации уголовного судопроизводства. Социалистическая законность. 9/1975г., էջ 65:
- ⁶ Տե՛ս Строгович М.С. Курс Советского уголовного процесса. М., 1968г., էջ 52-53:
- ⁷ Տե՛ս Мартинович И. И. Формы уголовного судопроизводства и воспитательная задача суда, Правоведение-1978/3, էջ 52:
- ⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 57-58:
- ⁹ Տե՛ս Строгович М.С. О единой форме уголовного судопроизводства и пределах ее дифференциации. Социалистическая законность.9/1974г., էջ 51:
- ¹⁰ Տե՛ս Пашкевич П. Процессуальные формы уголовного судопроизводства нужно дифференцировать. Социалистическая законность.9/1974г., էջ 54:
- ¹¹ Տե՛ս Арсеньев В. Упрощение неравнозначно упрощенчеству. Социалистическая законность.3/1975г., էջ 63:
- ¹² Տե՛ս Гуляев А. Единый порядок предполагает дифференциацию. Социалистическая законность.3/1975г., էջ 65:
- ¹³ Цыганенко С.С. Дифференциация как модель уголовного процесса (уголовно-процессуальная стратегия). Сборник Материалов международной научной конференции посвященной 160-летней годовщине со дня рождения проф. И.Я. Фойницкого << Стратегий уголовного судопроизводства>>. 11-12 окт. 2007г. Отв. ред. Н.В. Радутная, Изд-во. РАП. 2008, էջ 200,,: http://www.iaaj.net/1_oldmasp/modules.php?name=Content&pa=showpage&pid=21.
- ¹⁴ Տե՛ս օրինակ՝ Оржак А. Предложения о дифференциаций заслуживают поддержки. Социалистическая законность.3/1975г., էջ 64:
- ¹⁵ Кувалдина Ю.В. Ретроспектива развития упрощенных форм производства в уголовном процессе России(с 1 января 1961г.по 1 июля 2001г.).Юридический аналитический журнал. 4(8)/2003г., էջ 97:
- ¹⁶ Якуб М. Порядок уголовного судопроизводства следует дифференцировать. Социалистическая законность.1/1975г., էջ 66-67:
- ¹⁷ Տե՛ս Рустамов Х.У. Дифференциация форм уголовного процесса (Соврем. Тенденций и проблемы совершенствования): Дисс.... д-ра юрид. наук.: Москва, 1997г. էջ 339.
- ¹⁸ Տե՛ս Сычев А.А. Дифференциация уголовно-процессуальной формы производства по делам несовершеннолетних. Автореф. Дисс. ... канд. юрид. наук. Нижегородская академия МВД России. Н. Новгород, 2009г. էջ 10.
- ¹⁹ Տե՛ս Калиновский К. Б. Быстрота (срочность) уголовного судопроизводства- есть принцип уголовно-процессуального права.// Материалы международной научно-практической конференции <<Состояние и перспективы развития правовой науки>>.Ижевск, 30-31 марта 2006г. <http://www.kalinovsky-k.narod.ru/p/2006-4.html>
- ²⁰ Տե՛ս Михайлов А.И., Соя-Серко Л.А. Соловьев А. Б. Научная организация труда следователя.Москва, Юридическая литература. 1974г, էջ 12:
- ²¹ Տե՛ս Гуценко К.Ф., Головки Л.В., Филимонов Б.А. Уголовный процесс западных государств. Под ред. Гуценко К.Ф. Издание второе. МГУ имени Ломоносова, М- 2002 г., էջ 26:

ПРОБЛЕМА ДОПУСТИМОСТИ ДИФФЕРЕНЦИАЦИИ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОЙ ФОРМЫ

ГЕВОРГ БАГДАСАРЯН

*Советник председателя уголовного
апелляционного суда РА,
Соискатель кафедры уголовного
процесса и криминалистики ЕГУ*

Научная статья посвящена одному из актуальных проблем теории уголовного процесса—допустимости дифференциации уголовно-процессуальной формы.

Автор анализирует и сопоставляет противоположные подходы к проблеме, которые существуют в юридической ли-

тературе, потом представляет собственную точку зрения.

В результате соответствующего исследования, автор приходит к выводу, что дифференциация уголовно-процессуальной формы—есть объективная необходимость обусловленная потребностью обеспечения эффективности процесса.

Ключевые слова: уголовно-процессуальная форма, дифференциация, унификация, эффективность, процессуальная экономия.
